**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 06.07.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 պայմանագրում 2019 թվականի հունվարի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ N 1 | ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.12 կետեր: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

**06.07.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 պայմանագրի**

ք. Երևան 18.01.2019թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՏԵԽ ԴՐԱՖՏ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Ասրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 06.07.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.12 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Պայմանագրի 4.1 կետի առաջին պարբերությունը լրացնել հետևյալ արտահայտությամբ.

<<, 2019 թվականին մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը՝ **1 968 300 (մեկ միլիոն ինը հարյուր վաթսունութ հազար երեք հարյուր)** ՀՀ դրամ>>:

1.1.2 Պայմանագրի N 2 հավելվածը լրացնել նոր վճարման ժամանակացույցով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե | <<ՏԵԽ ԴՐԱՖՏ>> ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 | ք.Երևան, Վ.Վաղարշյան 21/28 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ <<Վանաձոր>> մ/ճ |
| Հ/Հ 900011011864 | Հ/Հ 11500030335003 |
| ՀՎՀՀ 02565827 | ՀՎՀՀ 00250424 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| ________________ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ. | ________________ Ա.Ասրյան (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված
06.07.2017թ. կնքված
N ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 գնման պայմանագրի
18.01.2019թ. կնքված N 2 համաձայնագրի

<<ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 02)*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71351540-1 | Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն | - | - | - | 787 300 | 787 300 | 787 300 | 1 673 100 | 1 673 100 | 1 673 100 | 1 968 300 | 1 968 300 | 1 968 300 | 1 968 300 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011864
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

---------------------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<ՏԵԽ ԴՐԱՖՏ>> ՍՊԸ
ք.Երևան, Վ.Վաղարշյան 21/28
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
<<Վանաձոր>> մ/ճ
Հ/Հ 11500030335003
ՀՎՀՀ 00250424

Տնօրեն՝

---------------------- Ա.Ասրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

# «ՏԵԽ ԴՐԱՖՏ»

## ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

✉ ՀՀ ք. Վանաձոր, Խորենացու փող. 7, բն. 13 հեռ. 093-78-86-34, 077-76-10-25


*«17» հունվարի 2019թ.*

## Լ Ի Ա Զ Ո Ր Ա Գ Ի Ր

«Տեխ Դրաֆտ» ՍՊ ընկերությունը լիազորում է Արման Մաղաքյանին /անձնագիր AK 0423725 տրված 20.01.2010թ. 018-ի կողմից, գրանցված ք.Վանաձոր, Բանակի 15շենք, 24բն./ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե ներկայացվող կատարողական ակտի փաթեթ, համաձայնագրեր և այլ փաստաթղթեր ստորագրելու և կնքելու համար:

«ՏԵԽ ԴՐԱՖՏ» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Ասրյան